ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

178
(2658)

10 դեկտեմբերի շաբաթ 2022
2022տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 152

«Չգիտեմ, թե ամեն անգամ նիկոլական ստերը հերքելուց հետո որքանով նա կուղղվի, բայց նման է վատ սովորող այն աշակերտին, որին ուսուցիչը, որքան էլ փորձում է 1+1=2 հավասարումը սովորեցնել, շարունակում է այլ բան պնդել»,- խորհրդարանական ճեպազրույցների ժամանակ՝ հոկտեմբերի 27-ին, հայտարարել էր «Հայաստան» խմբակցության անդամ Գեղամ Մանուկյանը: Նա այդ օրը թղթածրարով էր եկել, որտեղ ներառված էին Փաշինյանի գրառումները եւ պաշտոնական փաստաթղթերը, որոնք վկայում են երկու բան: «Նիկոլ Փաշինյանը գիտակցաբար ստում է, որ Ալմա-Աթայի՝1991 թ. դեկտեմբերի 8-ի հռչակագրով, երկու երկրները ճանաչելով տարածքային ամբողջականությունը, այդ թվում պատկերացրել են նաեւ Արցախն Ադրբեջանի կազմում», - ասաց Մանուկյանը՝ ցուցադրելով, թե ինչպես է Փաշինյանն իր ֆեյսբուքյան էջում տարբեր տարիների ընթացքում շնորհավորել Արցախի անկախությունը. «Իր կարճ ուղեղով շնորհավորել է, որ Արցախն անկախացել է Խորհրդային Միությունից»: Երկրորդը, պատգամավորի խոսքով, այն է, որ սուտ է Փաշինյանի այն հայտարարությունը, թե, Մադրիդյան սկզբունքներով, Արցախն Ադրբեջանի կազմում է: Ընդդիմադիր պատգամավորի կողմից բերված այս փաստաթղթերն ու հայտարարությունները եւս մեկ անգամ փաստում են, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել եւ մանիպուլացրել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը թիմի ներսում միայնակ է մնացել. նրա հետ հատուկենտ մարդիկ են շփվում: Նախկին նախարարը «սեւ ցուցակում» է հայտնվել ՔՊ վարչության ընտրություններից հետո, երբ բարձրացրել է անճշտությունների հարցը, որից հետո էլ ձայների վերահաշվարկ էր անցկացվել, եւ պարզվել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը կեղծիքի արդյունքում անցել էին վարչության կազմ, մինչդեռ իրականում ավելի քիչ ձայն էին ստացել նրանք: Բողոքարկման արդյունքում հենց պատգամավոր Արսեն Թորոսյանը դարձավ վարչության անդամ, եւ ազատ ընտրությունների մասին մշտապես բարձրաձայնող հեղափոխականների կյանքում մեծ բան փոխվեց. նրանք դարձան ընտրակեղծարարներ: Հիմա կուսակցության ներսում Արսեն Թորոսյանի դեմ քայլեր են իրականացվում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հովանու ներքո: Ինչպես հայտնի է, ՔՊ վարչության կեղծված ընտրություններում ակտիվ դերակատարություն է ունեցել պատգամավոր Արփի Դավոյանը, որը նաեւ համակարգում է Արսեն Թորոսյանի նկատմամբ ատելության գեներացիան: Այս օրերին խորհրդարանում մեր թղթակիցը նկատում է, որ Թորոսյանը գրեթե միշտ միայնակ է, նրա հետ շատ քիչ մարդիկ են շփվում, անգամ բարեւում: Նաեւ դա է պատճառը, որ նա հետաքրքիր քաղաքականություն է որդեգրել եւ խմբակցության նիստերի, հանդիպումների ժամանակ անգամ ընդդիմադիր ելույթներ է ունենում ու քննադատում իշխանությանը: Մարդ, որը տապալեց կորոնավիրուսի դեմ պայքարը, որպես նախարար՝ չհաջողեց, հիմա ընդդիմություն է խաղում:

ՀՀ պետական վերահսկողության ծառայությունը մտել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը հստակ հրահանգներ է տվել Պետական վերահսկողության ծառայությանը մանրազնին ուսումնասիրել ծառայության ոլորտը: Եվ, ահա, ՊՎԾ աշխատակիցները զննում են Հայաստանի բանտերի փաստաթղթերը, ուսումնասիրում տարբեր պայմանագրեր, փոխանցումներ, զարտուղի գումարների հնարավոր մուտքերը, որպեսզի հասկանան՝ նոր ծառայության պետ Սերգեյ Ատոմյանից հետո ինչ է փոխվել բանտերում: Ի դեպ, նշենք՝ «Ժողովուրդ» օրաթերթն օրերս գրել էր, որ սեւ ամպեր են կուտակվում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի գլխին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուժային կառույցները ՔԿՀ-ներում տիրող իրավիճակի մասով օպերատիվ տեղեկություններ են ստացել, որի առիթով սկսվել է գործընթաց: Բացի այդ, քաղաքական իշխանություններն են ծառայության պետի գործունեության մասով բացասական գնահատական տվել, ուստի չի բացառվում՝ ՔՊ նախկին պատգամավոր Սերգեյ Ատոմյանը հրաժեշտ տա իր պաշտոնին, թեեւ նա համակարգ էր մտել՝ առողջացնելու, հեղաշրջում անելու. փաստորեն, չի ստացվում:

Այսօր ավարտվում է Սահմանադրական դատարանի դատավորներ Արեւիկ Պետրոսյանի եւ Աշոտ Խաչատրյանի պաշտոնավարման ժամկետը: Նրանց պետք է փոխարինեն Սեդա Սաֆարյանն ու Հովակիմ Հովակիմյանը, որոնք արդեն ընտրվել են խորհրդարանի կողմից: Սակայն Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորները դեռեւս չեն կարող ստանձնել իրենց պարտավորությունները, քանի որ խորհրդարանում դեռ չեն երդվել, իսկ դա ամրագրված է Սահմանադրական դատարանի մասին օրենքում: Մասնավորապես, օրենքում ասվում է. « Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորն իր պաշտոնն ստանձնում է Սահմանադրական դատարանի համապատասխան դատավորի լիազորությունների դադարման օրը: Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորն ընտրությունից հետո Ազգային ժողովի նիստում տալիս է երդում»: Եվ ահա. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, խորհրդարանից փոխանցել են, թե հաջորդ շաբաթ Ազգային ժողովի արտահերթ նիստեր են լինելու եւ նորընտիր դատավորները կհասցնեն երդվել ու ստանձնել պաշտոնը: Ժողովուրդ օրաթերթի տեղեկություններով, ծրագիր է եղել միջոցառում կազմակերպել եւ այդպես հրաժեշտ տալ հեռացող դատավորներին, ընդունել նորերին, սակայն մտավախություն է եղել, որ միգուցե հին ու նորերը չցանկանան միմյանց տեսնել եւ արդյունքում որոշում է կայացվել այդ կերպ հանձնում-ընդունում չկատարել:

ՉԵՆ ՀԻՇՈՒՄ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՎՄԱ ՈՒՆԵՆ

Դատավոր Մնացական Մարտիրոսյանն այժմ, Նիկոլ Փաշինյանի ասած, հանգիստ նստած է իր տեղում, ու ավելին՝ առաջիկայում կարող է կոռուպցիոն դաշտոնյաների վարքը քննել, դատել նրանց: Մոտ մեկ ամիս առաջ, հիշեցնենք, Բարձրագույն դատական խորհուրդը 6 կողմ, 3 դեմ ձայների հարաբերակցությամբ երկու թեկնածուներից հենց նրան էր որպես Հակակոռուպցիոն դատարանի դատավոր ընտրել: Վերջնական որոշում կայացնողը հանրապետության նախագահն է:

2018-ի քաղաքական վերադասավորումներից հետո, հիշեցնենք, Փաշինյանը հայտարարում էր. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով հաստատված՝ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատավորները պետք է հրաժարական տան, հեռանան կամ հեռացվեն պաշտոններից»:

Եվրադատարանի վճիռներից հետո, սակայն, Մնացական Մարտիրոսյանը ոչ միայն չի հրաժարվել դատավորի թիկնոցից, այլեւ, ըստ երեւույթին, իր ուսերին է պատրաստվում առնել իշխող «Քաղաքացիական պայմանագրի» կողմից տրամադրվող նոր ու ավելի բարձր դասի թիկնոցը:

Իրավապաշտպան Նինա Կարապետյանցը Փաշինյանի՝ դեռեւս 2019-ին արած վերոնշյալ հայտարարությունը լավ է հիշում, բայցեւ շեշտում է՝ ոչ միայն Փաշինյանը, այլեւ իշխանական ամբողջ էլիտան իրենց հայտարարությունները մոռանալու կամ դրանից հրաժարվելու հատուկ ձիրք ունեն:

-Տիկին Կարապետյանց, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, թե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով հաստատված՝ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատավորները պետք է հրաժարական տան, հեռանան կամ հեռացվեն պաշտոններից, սակայն Բարձրագույն դատական խորհուրդը 6 կողմ, 3 դեմ ձայների հարաբերակցությամբ երկու թեկնածուներից հենց նրան էր որպես Հակակոռուպցիոն դատարանի դատավոր ընտրել: Այս երեւույթը ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Ինքը խոստացավ շանսեր տալ տարբեր մարդկանց: Ես ինքս, իհարկե, կողմ եմ մարդկանց շանսեր տալուն, բայց դրանից առաջ շատ հստակ պետք է հասկանալ՝ մարդն ինչ իրավիճակում է որոշումներ կայացրել եւ ինչ որոշումներ է կայացրել: Օրինակ՝ հայտնի Պողոս Պողոսյանի սպանության համար պայմանական տալ Ռոբերտ Քոչարյանի թիկնապահներից մեկին, կամ «Մարտի 1»-ի գործով անձանց դատապարտել անազատության՝ հասկանալով, որ դրանք կոնկրետ ակնհայտ կեղծ մեղադրանքներ են: Մենք հիմա էլ դեռ ստանում ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ, եւ հենց վարչապետ Նիկոլ Փաշինյանն էր անգամ հայտարարել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանից եկած բոլոր որոշումներով հայտնի դատավորները պետք է համակարգից դուրս գան: Պարզվեց, սակայն, որ այս անգամ եւս իրականություն չեն իր խոսքերը, եւ ավելին՝ իր արած որեւէ հայտարարության համար նա պատասխանատվություն չի կրում: Առհասարակ, այս իշխանություններն իրենց խոսքերի համար պատասխանատվություն չեն կրում: Դա միգուցե հիվանդություն է, մանկական տրավմա կամ նման այլ բան, բայց դա փաստ է:

-Հասարակությունը, կարծես թե, ներում է եւ չի կանչում պատասխանատվության հենց այդ հայտարարությունների համար: Ինչո՞ւ. դեռ թմբիրի մե՞ջ է, թե՞ այլ որեւէ պատճառ կա:

-Կարծում եմ, որ համախմբող չկա, բայց հասարակությունը եռում է: Ես ինքս իմ աշխատանքի բերումով շփվում եմ շատ տարբեր մարդկանց հետ՝ սկսած քրեական ենթամշակույթ կրողներից, որքան էլ դա մերժելի թվա, եւ վերջացրած գիտնականներով, փորձագետներով, հացթուխներով, վարորդներով: Մեր քաղաքացիները եռում են անարդարության եւ խաբված լինելու զգացումից: Մեր հասարակության մեջ, սակայն, այդ ինքնաբուխությունը շատ դժվար է տեղի ունենում, եւ մեզ անհրաժեշտ են անձինք, խմբեր, որոնք այդ լիդերությունը կվերցնեն իրենց վրա, միգուցե հիմա այդպիսի մարդ չեն տեսնում: Հիմա փողոց են դուրս գալիս մերժվածները, հայտարարություններ են անում եւ, եթե լսում եք, բավական խելամիտ հայտարարություններ են անում, սակայն շատերը չպետք է նաեւ իրավական եւ բարոյական առումով իրավունք ունենային խոսել եւ նման հայտարարություններ անել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԺԱՄԿԵՏՆ ԱՎԱՐՏՎՈՒՄ Է

ԲՈՒՀԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՉԿԱ

Չնայած իշխանությունների կողմից իրականացվող ակնհայտ ու ծածուկ ճնշումներին՝ երեկ՝ դեկտեմբերի 9-ին, Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր է վերընտրվել Կարինե Հարությունյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանություններն անգամ սեփական լրատվամիջոցներով էին փորձում ստվերել Հարությունյանի գործունեություն ու ռեկտորի ընտրություններից մեկ օր առաջ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցով գրում էին Պետական վերահսկողական ծառայության՝ բուհում իրականացրած ստուգումների մասին:

ՊՎԾ-ի՝ ավելի քան 7 ամիս տեւած ստուգումների մասին առ այսօր հաշվետվություն չի ներկայացվել: Մենք տեղեկացանք նաեւ, որ ռեկտորի պաշտոնում սեփական թեկնածուին ունենալու ակնկալիքով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը սեփական թեկնածուին՝ Լեզվի տեսչության ղեկավար Դավիթ Գյուրջինյանին էր առաջադրել, ու ուսանողների, նրանց ծնողների վրա տարբեր ճնշումներ բանեցնելով՝ փորձում էր Գյուջինյանի համար ճանապարհ հարթել, ինչը, փաստորեն, չի ստացվել. բուհի խորհուրդը նախընտրեց գործող ռեկտորին: Ինչ վերաբերում է բուհերի միավորման գործընթացին, ապա այն, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ոչ միայն կանգ է առել, այլ դրա նախնական՝ սեւագիր տարբերակը հեղինակները պատռել, դեն են նետել:

Հիշեցնենք, որ ուղիղ մեկ ամիս առաջ՝ նոյեմբերի 8-ին, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, կառավարական կաբինետում, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ, աշխատանքային խումբ էր ստեղծվել: ԿԳՄՍ նախկին նախարարի ղեկավարած աշխատանքային խումբը մինչեւ նոյեմբերի 30-ը վարչապետին գրավոր կարծիք ու առաջարկներ պետք է ներկայացներ: Այսօր արդեն դեկտեմբերի 10-ն է, բայց վերոնշյալ աշխատանքային խումբը հրապարակային որեւէ հայտարարություն չի ներկայացրել: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Արայիկ Հարությունյանի աշխատակազմից որեւէ մեկի հետ: Բազմաթիվ զանգերից հետո մեզ հաջողվեց աշխատակազմից մի աղջկա հետ կապ հաստատել, որն այդպես էլ մինչեւ զրույցի ավարտը չներկայացավ, չասաց իր անունը:

Նա փոխանցեց, որ, իր տեղեկություններով, աշխատանքային խումբը դեռ աշխատում է, ու, որպես բարի կամքի դրսեւորում, խորհուրդ տվեց գրավոր հարցում ուղարկել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հարությունյանի ղեկավարած աշխատանքային խումբը ժամկետները խախտել ու նշված ժամանակահատվածում գրավոր կարծիք չի ներկայացրել, դրա համար էլ նրա՝ ներկայանալ վախեցող աշխատակիցը խսիր «սիրալիր» կերպով պատասխանեց մեր հարցերին ու նույն «սիրալիր» կերպով հեռախոսն անջատեց մեզ վրա:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՆՈՐ ՑԱՆԿ

Սեփական թիմի ներսում խարդավանքներ հյուսող ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը նոր թիրախներ ունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս անգամ ՔՊ-ական պատգամավորը կենտրոնացել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, նրա ընկեր պատգամավորներ Հրաչյա Հակոբյանի ու Սիսակ Գաբրիելյանի վրա: Քոչարյանը տարբեր վայրերում, մասնավոր զրույցներում պահը չի կորցնում խոսել երեք պատգամավորների մասին, նրանց մեղադրել շատ գործուղումների մեկնելու համար, անգամ բուքմեյքերական «Վիվարո» ընկերությունից «փայ» ունենալու համար: «Ֆակտոր»-ին նոյեմբերի 25-ին տված հարցազրույցի ժամանակ նա անդրադարձել էր նաեւ այդ «Վիվարո»-ի գործունեությանը եւ իր թիմակիցների՝ Հունաստանում հանգստին: Լրագրողը հարց է հնչեցնում՝ «Վիվարո»-ին գուցե քաղաքական երաշխիքներ են տվել գործընկերները, որոնք Հունաստանում իրենց հաշվին հանգստանում են: Ի պատասխան՝ Անդրանիկ Քոչարյանը նշել է. «Պետք է Ազգային անվտանգությունը ճշտի ամեն ինչ, նաեւ Ձեր բարձրացրած հարցը»: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանն ասաց, որ ինքը որեւէ առնչություն չունի «Վիվառո» ընկերության հետ եւ երբեւէ այդ ընկերությունից գումար չի ստացել: «Իմ եկամուտը գոյանում է պատգամավորական աշխատավարձից: Եթե իրավապահ համակարգը գտնում է, որ պետք է ստուգի, թող ստուգի», - նշեց նա: Հիշեցնենք, որ սա առաջին դեպքը չէ, երբ Անդրանիկ Քոչարյանը ՔՊ-ի ներսում խարդավանքներ է հյուսում:

ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ

Ամանորին քիչ ժամանակ է մնացել, եւ ավանդաբար այս օրերին Երեւանից դուրս գտնվող հանգստյան տներում ազատ տեղեր գտնելն անհնար էր լինում: Հայաստանում, պատերազմական իրավիճակով եւ սեպտեմբերյան իրադարձություններով պայմանավորված, կյանքն իսկապես կանգ է առել, հատկապես՝ այն վայրերում, որտեղ կատարվել են այդ գործողությունները: Խոսքը մանսավորապես ակտիվ տուրիստական գոտի Ջերմուկ քաղաքի, Սյունիքի մի քանի համայնքների մասին է: Իշխանությունների այն հավաստիացումները, թե այդ վայրերում կյանքը վերսկսվել է, այնքան էլ իրականությանը չեն համապատասխանում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պահի դրությամբ Ջերմուկ քաղաքի հյուրանոցներում, ռեստորաններում եւ հանգստի այլ վայրերում բնականոն կյանքը չի վերականգնվել, եւ անգամ 30 տոկոս ամրագրում առկա չէ հյուրանոցների կամ առողջարանների. մարդիկ վախենում են եւ ցանկություն չունեն այնտեղ գնալու եւ Ամանորն անցկացնելու: Այստեղ վստահաբար նաեւ պետական քաղաքականություն է պետք, եւ ճիշտ կլինի, որ պատկան գերատեսչությունների ղեկավարները հորդորեն իրենց աշխատակիցներին գնալ Ջերմոկ՝ փորձելով աշխուժացնել հենց այնտեղի կյանքը:

ՄԵԿՆՈՒՄ՝ ՍՏԱՄԲՈՒԼ

Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը Երեւանից մեկնում է Ստամբուլ: Այս մասին Կլաարը գրել է «Թվիթեր»-ում՝ չհստակեցնելով, թե ինչ հանդիպումներ կունենա Թուրքիայում:

Նա երեկ էր եկել Երեւան, եւ Եվրամիության պաշտոնյային ընդունել էին վարչապետը, փոխվարչապետն ու արտաքին գործերի նախարարը: Հայաստանցի պաշտոնյաները Կլաարի հետ քննարկել են խաղաղության պայմանագրին, Լեռնային Ղարաբաղի շուրջ վերջին զարգացումներին, ինչպես նաեւ Արցախի հայության իրավունքներին եւ անվտանգությանը վերաբերող հարցեր:

Օրինակ՝նշվում է, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ կողմերը կարեւորել են ԵՄ քաղաքացիական առաքելության տեղակայումը Հայաստանում եւ անդրադարձել առաքելության գործունեությանը: Փաշինյանն ընդգծել է Պրահայում կայացած հանդիպման ձեւաչափի համաձայն հետագա քննարկումների կարեւորությունը:

Իսկ, ահա, ՀՀ արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Արարատ Միրզոյանը նշել է, որ հայկական կողմը հավատարիմ է տարածաշրջանում խաղաղություն եւ կայունություն հաստատելու իր դիրքորոշմանը՝ ընդգծելով, որ Ադրբեջանի շարունակական սադրիչ գործողություններն ու առավելապաշտական հռետորաբանությունը բերում են անվտանգային փխրուն իրավիճակի սրման: Հատուկ ներկայացուցիչն իր երեւանյան հանդիպումները առարկայական է որակել:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԼՄ

Մարգարայի՝ դեռեւս 1963-ին կառուցված կամուրջը, որ Հայաստանը Թուրքային կապող շահագործման ենթակա հաղորդակցային միակ ճանապարհի բաղկացուցիչ մասն է, ըստ թուրքական լրատվամիջոցների, մինչեւ տարեվերջ կարող է երթեւեկության ակտիվ գոտու վերածվել: Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման երկրորդ փուլը մեկնարկել է:

«Հայաստանի ու Թուրքայի պաշտոնյաներն այժմ քննարկում են մինչեւ 2022-ի ավարտն օդային հաղորդակցություն (նախնական միայն բեռնափոխադրումների մասին է խոսվում-հեղ.), ապա նաեւ սկսելու եւ Ալիջանի ցամաքային անցակետը բացելու մասին հարցերը»,- այս մասին գրում է թուրքական Hurriyet Daily News-ը՝ հղում անելով Թուրքայի կառավարության սեփական աղբյուրներին:

Ըստ լրատվամիջոցի՝ սա հայ-թուրքական հարաբերությունների երկրորդ փուլի մեկնարկ է նշանակում: Նշենք, որ Ալիջանը հայկական Մարգարայի հարեւան բնակավայրն է՝ Արաքսի մյուս ափին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՓԱՇԻՆՅԱՆ ՈՒ ՊՈՒՏԻՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Քիշքեկում երեկ տեղի է ունեցել Վլադիմիր Պուտին-Նիկոլ Փաշինյան հանդիպումը: Բանակցությունների մեկնարկին Հայաստանի վարչապետը առաջարկել է խոսել տարածաշրջանային անվտանգության մասին՝ ընդգծելով «լարվածության աճը Լեռնային Ղարաբաղում՝ ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտում»:

«Իրավիճակը մեզ մոտ մնում է լարված: Մեր տարածաշրջանում գլխավոր հարցը մնում է ղարաբաղյան կարգավորումը: Ցավոք, մենք տեսնում ենք նաեւ լարվածություն Լեռնային Ղարաբաղում՝ ռուսական խաղաղապահների պատասխանատվության գոտում»,-բացելով հանդիպումը՝ասել է Փաշինյանը՝խոսելով Լաչինի միջանցքում տեղի ունեցած վերջին զարգացումների՝ ճանապարհը փակելու ադրբեջանական փորձերի մասին:

«Լեռնային Ղարաբաղում լուրջ մտավախություններ կան այս առիթով: Եվ ես հույս ունեմ, որ մեզ կհաջողվի քննարկել տարածաշրջանային անվտանգության բոլոր հարցերը»,- ասել է Փաշինյանը:

Հայաստանի վարչապետը պնդել է, թե Ռուսաստանը Հայաստանի առաջատար առեւտրատնտեսական գործընկերն է:

«Այս տարվա առաջին տասը ամիսներին մեր առեւտրաշրջանառությունը եղել է 67 տոկոս, ինչը լավ ու դրական ցուցանիշ է: Այդուամենայնիվ, միշտ կան հարցեր, եւ ես ուրախ եմ, որ մենք ունենք դրանք քննարկելու այս հնարավորությունը»,- ասել է Փաշինյանը՝ հույս հայտնելով, որ ԵԱՏՄ մեխանիզմների լավարկման միջոցով կհաջողվի պահպանել ռուս-հայկական տնտեսական փոխազդեցության դրական դինամիկան:

Բիշքեկում երեկ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին էր մասնակցում վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ ելույթ ունենալիս շեշտում էր, որ վերջին տարիներին ԵԱՏՄ երկրների տնտեսական զարգացումն ընթանում է ոչ դյուրին պայմաններում:

Կրկին անդրադառնալով ԵԱՏՄ ներսում գազի ընդհանուր շուկա ձեւավորելու հարցին՝ Փաշինյանը շեշտել է՝ այն Հայաստանի համար զգայուն խնդիր է:

Վարչապետը նկատել է՝թեեւ հաջողվել է ապահովել գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային համաձայնագրի նախագծի պատրաստվածության բարձր մակարդակ, սակայն մի շարք չլուծված խնդիրներ են մնում:

«Մենք պատրաստ ենք ճկուն մոտեցում ցուցաբերել՝ կոնսենսուսի հասնելու եւ չլուծված հարցերի շուրջ ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների շահերի հավասարակշռությունն ապահովելու համար՝Միության ընդհանուր գազի շուկայի առավելություններն ու ներուժը լիովին օգտագործելու նպատակով», - ասել է Փաշինյանը:

Հայաստանի իշխանությունները պարբերաբար բարձրաձայնում են Եվրասիական տնտեսական միության երկրների էներգակիրների միասնական շուկա ստեղծելու խնդիրը: Հարցը հատկապես կարեւոր է անդամ այն երկրների համար, որ նավթ ու գազ չունեն՝Հայաստանի, Բելառուսի եւ Ղրղզստանի: Փորձագետների կարծիքով՝առաջիկա տարիներին դժվար թե ընդհանուր շուկայի հարցը վերջնական կարգավորվի, քանի որ ԵԱՏՄ անդամ երկրների մոտեցումներն այս հարցում տարբեր են: Վարչապետը Բիշքեկում համագործակցության մեկ այլ կարեւոր ուղղություն է համարել ԵԱՏՄ-ի եւ երրորդ երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը:

«Չինաստանի հետ առեւտրատնտեսական համաձայնագրի իրականացումը, Իրանի, Սինգապուրի եւ Սերբիայի հետ ազատ առեւտրի մասին համաձայնագրերի իրականացումը, ինչպես նաեւ Եգիպտոսի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Իսրայելի, Հնդկաստանի եւ Ինդոնեզիայի հետ ազատ առեւտրի համաձայնագրերի շուրջ շարունակվող բանակցությունները լրացուցիչ խթան կհաղորդեն Միության՝ համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացին», - ըստ Հայաստանի կառավարության՝ ասել է գործադիրի ղեկավարը՝ շեշտելով՝ դա իր հերթին կբերի ԵԱՏՄ ապրանքների արտահանման ծավալների ավելացմանը, արտաքին շուկաների դիվերսիֆիկացմանը, ներդրումների ներգրավմանը եւ երրորդ երկրների հետ միջազգային տնտեսական գործընկերության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՄՆ–ՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը ԱՄՆ կատարած այցի շրջանակում դեկտեմբերի 9-ին Վաշինգտոնում հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանքի հարցերով փոխտեղակալ Կարա Մըքդոնալդի հետ:

Կարա Մըքդոնալդը գոհունակություն է հայտնել Պաշտպանի հետ հանդիպման համար, ապա կողմերը մտքեր են փոխանակել Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ, քննարկվել են առաջնահերթ հարցեր: Հանդիպման ընթացքում Պաշտպանը ներկայացրել է սեպտեմբերի 13-14-ին ՀՀ սուվերեն տարածքի վրա ադրբեջանական ագրեսիայի եւ հարձակման հետեւանքները, մասնավորապես՝ ՄԻՊ-ի կողմից փաստագրված մարդու իրավունքների շարունակական խախտումները:

ԾՐԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ

Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակում դեկտեմբերի 9-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մասնակցել է ՇՀԿ եւ ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների համատեղ հանդիպմանը, որտեղ ներկայացրել է ադրբեջանական վերջին ռազմական ագրեսիայի հետեւանքով տարածաշրջանում ստեղծված իրադրությունը:

Այնուհետեւ տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի եւ ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվել են տարածաշրջանային անվտանգությանն առնչվող, ինչպես նաեւ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության մի շարք ընթացիկ հարցեր: Հանդիպման ավարտին ստորագրվել է ՀՀ եւ ՌԴ պաշտպանության նախարարությունների միջեւ ռազմական համագործակցության 2023թ. ծրագիրը:

ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՌԵԿՏՈՐ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ համալսարանի ռեկտորի պաշտոնի համար հայտարարված մրցույթը, որի համար հայտ է ներկայացրել 2 անձ՝ գործող ռեկտոր Կարինե Հարությունյանը եւ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործող ռեկտոր Կարինե Հարությունյանը վերընտրվեց ռեկտորի պաշտոնում՝ ձայների 12- 8 հարաբերակցությամբ:

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՊԻՏԱԿ ՖՈՍՖՈՐԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված՝ միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումներով զուգորդված ագրեսիվ պատերազմի հանգամանքները բնելու համար Արցախի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հարուցվել են մի շարք քրեական գործեր, որոնց շրջանակում նախաքննական մարմնի կողմից առգրավվել են բազմաթիվ չպայթած արկեր ու արկերի մնացորդներ, նշանակվել են փորձաքննություններ:

Այս մասին հայտնում են Արցախի Հանրապետության դատախազությունից:

Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչի կողմից փորձաքննության էին ներկայացվել նաեւ Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքի վարչական տարածքում հայտնաբերված, չպայթած հրթիռը եւ դրանից ստացված նմուշները: Անկախ փորձագիտական խմբի կողմից կատարված հետազոտության արդյունքում տրված եզրակացությամբ (եզրակացությունը ստացվել է 07.12.2022թ.) փաստվել է, որ այն իրենից ներկայացնում է սպիտակ ֆոսֆորից բաղկացած ֆոսֆորային ռազմամթերք:

Ռազմամթերքի հայտնաբերման, վնասազերծման եւ նմուշառման ողջ գործընթացը կատարվել է մասնագետների մասնակցությամբ, ամրագրված տեսաձայնագրությամբ, հետազոտության առարկան եւ փորձաքննության նյութերը անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել միջազգային փորձագետների հետազոտությանը:

Այսպիսով, փորձագիտական հետազոտության արդյունքներով հաստատվել է, որ 2020թ. 44-օրյա պատերազմի օրերին Ադրբեջանի զինված ուժերը զանգվածային ոչնչացման ու մարդկային մեծաթիվ կորստի, տառապանքի ու վնասի հանգեցնող քիմիական զենքով ուղիղ թիրախավորել են այն բնակավայրերը, որտեղ գտնվում էր խաղաղ բնակչություն (պատերազմի օրերին ու դրանից հետո հրապարակվել էին քիմիական զենքի կիրառության մասին վկայող մի շարք տեսանյութեր): Այդ կերպ Ադրբեջանը կոպտորեն խախտել է Ժնեւի կոնվենցիայի (Արձանագրություն 1) 35-րդ հոդվածը, համաձայն որի՝

«-Ցանկացած զինված ընդհարման դեպքում ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ պատերազմելու մեթոդների եւ միջոցների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ:

-Արգելվում է կիրառել այնպիսի զենքեր, արկեր, նյութեր, ինչպես նաեւ պատերազմելու այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ ավելորդ տառապանքներ պատճառել,

-Արգելվում է կիրառել պատերազմելու այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնք նպատակ ունեն շրջակա միջավայրին պատճառել կամ, կարելի է ենթադրել, որ կպատճառեն լայնածավալ, տեւական եւ լուրջ վնաս»:

ԽՆԴԻՐՆԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԲՌՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի գենդերահավասարության բաժնի կարողությունների զարգացման եւ համագործակցության ծրագրերի ենթաբաժնի ղեկավար Մարթա Բեկերրայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտանիքում եւ կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման եւ բացահայտման ոլորտում ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հմտությունների ու կարողությունների զարգացմանը, այդ պայքարում հիմնական դերակատար կառույցների միջեւ համագործակցության ամրապնդմանն ուղղված նոր համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալը խիստ օգտակար է գնահատել ՀՀ քննչական կոմիտեի ներգրավմամբ մինչ այժմ ԵԽ-ի կողմից իրականացված՝ կանանց համար արդարադատության մատչելիությանը, քննիչների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման գործընթացները: Նա ողջունել է ՀՀ քննչական կոմիտեի հետ անմիջական գործակցության նոր նախագծեր մշակելու ԵԽ-ի նախաձեռնողականությունը:

Արսեն Այվազյանը նշել է, որ եվրոպական իրավունքի հիման վրա ընտանիքներում եւ կանանց նկատմամբ բռնությունների դեմ քրեաիրավական պայքարի խստացման ՀՀ պետական հետեւողական քաղաքականությունն արտահայտվել է ՀՀ քրեական եւ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքերում տրված նոր լուծումներով: Իսկ ՀՀ քննչական կոմիտեն ակտիվորեն ներգրավված է ոչ միայն այս ոլորտի իրավակիրառ պրակտիկայի, այլ նաեւ օրենսդրական բարեփոխումների գործընթացներում: Նա մանրամասն ներկայացրել է բռնություններից քաղաքացիների պաշտպանության իրավական կառուցակարգերի մասին հանրային իրազեկվածության բարձրացմանը, քննիչների շրջանում կանանց ավելի մեծ ներգրավվածություն ապահովելուն ուղղված ՀՀ քննչական կոմիտեի ջանքերը:

Մարթա Բեկերրան գոհունակություն է հայտնել վերջին շրջանում կանանց նկատմամբ, ընտանեկան բռնությունների դեմ պայքարում Հայաստանի հետեւողական քայլերի կապակցությամբ՝նշելով, որ այս բնույթի հանցագործությունների դեմ պայքարի դատավարական նոր ընթացակարգերն ու լուծումները համապատասխանում են եվրոպական չափորոշիչներին: Բռնարարներին քրեական պատասխանատվության ենթարկելու եւ պատժի անխուսափելիության ապահովման տեսանկյունից նա կարեւորել է հատկապես մինչդատական վարույթում ապացույցների ձեռք բերման գործընթացը, քրեական վարույթների համար ամուր փաստակազմով դատական հեռանկարի ապահովումը: Այդ նպատակով ԵԽ-ն, ըստ տիկին Բեկերրայի, պատրաստ է աջակցություն ցուցաբերել վերապատրաստումների միջոցով քննիչներին լրացուցիչ հմտություններ տալու հարցում: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել գործակցության նոր ծրագրերը դետալային քննարկման արժանացնել աշխատանքային կարգով:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՌՈՅ ԴԵՊՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դեկտեմբերի 8-ին Թաիրովի փողոցում արտառոց դեպք է տեղի ունեցել: Մեզ հայտնի դարձավ, որ 37 տարեկան տղամարդն ինքնասպանության փորձ է կատարել՝ փորձելով ինքնահրկիզվել: Ոստիկաններին հաջողվել է կանխել տղամարդու ինքնասպանության փորձը:

Նշենք, որ տղամարդն Արցախի քաղաքացի է եւ Հայաստան է եկել 44-օրյա պատերազմի ժամանակ:

ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑԵԼ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սիսի Շենին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, իր անչափահաս դուստրերի՝ Սիլուտ Շենի (ծնված՝ 2010 թվականի օգոստոսի 18-ին) եւ Միլոտ Շենի (ծնված՝ 2012 թվականի հոկտեմբերի 21-ին) հետ միասին 2022 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 17:20-ի սահմաններում, շրջանցելով ՀՀ Արարատի մարզում գտնվող՝ ՌԴ ԱԴԾ 125-րդ սահմանապահ ջոկատի «Բուրաստան» սահմանապահ ուղեկալի ինժեներատեխնիկական փշալարերը, առանց սահմանված փաստաթղթերի եւ պատշաճ թույլտվության, փորձել է ապօրինի հատել ՀՀ պետական սահմանն ու մուտք գործել Թուրքիայի Հանրապետություն, սակայն վերջինիս դիտավոր հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, քանի որ բռնվել է ՀՀ-ում ՌԴ ԱԴԾ ծառայողների կողմից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Ոստիկանության Թումանյանի բաժնի քրեական հետախույզների եւ անձնագրային բաժանմունքի աշխատակիցների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 8-ին Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցում հայտնաբերվել եւ բաժին է ներկայացվել 49-ամյա Սեյրան Հ.-ն, որը 2018 թ. նոյեմբերի 12-ից ոստիկանության Նոր Նորքի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-205-րդ (Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն հանցակցելը) եւ 178-րդ (Խարդախությունը) հոդվածների մեղադրանքով: Այս մասին տեղեկանում ենք ոստիկանությունից: Խափանման միջոցը՝ ստորագրություն: Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՆՀԱՎԱՍԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ

Նվազագույն աշխատավարձը հունվարի 1-ից կդառնա 75 հազար դրամ՝ նախկին 68 հազար դրամի փոխարեն: ՀՀ Ազգային ժողովը դեկտեմբերի 7-ին երկրորդ ընթերցմամբ ընդունեց օրենքի փոփոխությունը: Այս օրենսդրական փոփոխությունը կբարձրացնի շատերի աշխատավարձը, սակայն շատերի ռոճիկն էլ անփոփոխ կմնա: Տավուշի մարզում խանութներ կան, որտեղ վաճառողները նույնիսկ շաբաթ օրն էլ են աշխատում, սակայն ստանում են նվազագույնից ցածր՝ 50-60 հազար դրամ աշխատավարձ: Այդ աշխատողների մի մասը գրանցված է որպես աշխատող, մի մասն էլ առանց գրանցումի է աշխատում, գործատուն նրանց համար եկամտահարկ չի մուծում, ուստի նրանց աշխատած ժամանակը չի կարող համարվել աշխատանքային ստաժ: Տավուշի մարզի գյուղերի փոքր դպրոցներում որոշ ուսուցիչներ, քիչ դասաժամեր ունենալով, ստանում են նվազագույնից ցածր աշխատավարձ այն դեպքում, որ այդ դպրոցի հավաքարարը ստանում է նվազագույն՝68 հազար դրամ աշխատավարձ:

ՋՐԱԳԻԾԸ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է

1976-1980 թվականներին կառուցվեց 44 միլիոն խորանարդ մետր տարողությամբ Ջողազի ջրամբարը, որի ջրերով ոռոգվում էին Նոյեմբերյանի եւ Իջեւանի շրջանների հազարավոր հեկտար այգիներ եւ վարելահողեր: 1990թվականի ամռանը հայ-ադրբեջանական հակամարտության պատճառով Ջողազի ջրամբարից սնվող պոմպակայանը դադարեց գործել, որից հետո ադրբեջանցիները թալանեցին իրենց տարածքով ձգվող ոռոգման խողովակաշարը: Այժմ սուբվենցիոն ծրագրով հայ-ադրբեջանական փաստացի սահման հանդիսացող Ջողազի ջրամբարի աջ ափին գտնվող՝ Իջեւան խոշոր համայնքի Բերքաբեր գյուղում ոռոգման ջրագիծ է կառուցվում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 229 միլիոն դրամ: Նոր պոմպակայանը, բաշխիչ ցանցը, գործարկվելիք խողովակաշարը կապահովեն վայրկյանում 90 լիտր ոռոգման ջուր: 2023 թվականի գարնանը՝ ոռոգման նոր սեզոնի մեկնարկին, Բերքաբերում ոռոգման նոր ջրագիծը կգործարկվի:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ՉԵՆ ԳՈՐԾՈՒՄ

Տավուշի մարզպետարան էլեկտրոնային փոստով «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրության անունից հարցում էի ուղարկել, սակայն մարզպետարանից հայտնեցին, որ մարզպետարանի քարտուղարության էլեկտրոնային հասցեներն արդեն 3 շաբաթ չեն գործում: Այդ էլեկտրոնային հասցեները պատկանում են միասնական տեղեկատվական կենտրոնին եւ սկսվում են շta տառերով: Պետական ապարատը Հայաստանի պետական բյուջեից միլիոնավոր դրամներ պարգեւավճարներ է ստանում, պետական հիմնարկների էլեկտրոնային հասցեները ինչո՞ւ գործող վիճակում չեն պահում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԵՂԾՎԻ

ՀՀ ազգային ժողովը քննարկում է Ներքին գործերի նախարարություն ստեղծելու մասին օրենսդրական նախաձեռնությունը:

«Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց ՀՀ արդարադատության փոխնախարար Արփինե Սարգսյանը:

Փաթեթով առաջարկվում է ստեղծել Ներքին գործերի նախարարություն: Ներքին գործերի նախարարության շրջանակներում ամփոփվելու են երեք ծառայություններ՝փրկարար ծառայությունը, ոստիկանությունն ու միգրացիայի ու քաղաքացիության ծառայությունը:

«Սա պարզապես հերթական նախարարության ստեղծումը չէ: Բովանդակային առումով սա ենթադրում է ոստիկանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության, ինչպես նաեւ քաղաքացիական վերահսկողության իրականացում»,- ասաց Սարգսյանը: Ոստիկանությունն այժմ չունի իր համար քաղաքականության մշակման համար պատասխանատու սուբյեկտ, եւ, ըստ այդմ, ինքնակատարելագործման ճանապարհով է գնում: Սակայն փոխնախարարը շեշտեց՝ պետք է տարանջատվեն քաղաքականության մշակման եւ քաղաքականության իրականացման ֆունկցիաները: Ըստ նրա՝քաղաքացիական նախարարության ստեղծման առավելությունն այն կլինի, որ Ոստիկանության ոլորտի բարեփոխումների պատասխանատու կլինի՝ ի դեմս ՆԳՆ-ի, կլինի նաեւ ոլորտի քաղաքական պատասխանատու՝ ի դեմս ներքին գործերի նախարարի: Իսկ ոստիկանությունը՝ ոստիկանապետի մակարդակով, պատասխանատու կլինի այս ծառայության ամենօրյա գործունեության համար:

Փոխնախարարը նաեւ աղետների ու ռիսկերի ընդհանուր տրամաբանության մեջ կարեւորեց մեկ կետից կառավարում ու մեկ կետից քաղաքականության մշակում ունենալը: «Իսկ այդ 3 կառույցներն, ըստ էության, հենց առօրեական մակարդակում բախվում են տարբեր ճգնաժամային իրավիճակների, եւ, հետեւաբար, տրամաբանական է մեկ նախարարության ներքո ունենալ այս բոլոր ոլորտների քաղաքականության մշակումը»,-նշեց Սարգսյանը:

Նախարարության ենթակայության ներքո լինելու է առանձին ակադեմիա, որը պատասխանատու կլինի կադրերի որակի համար, կիրականացնի համապատասխան ուսուցումը:

«Այս բարեփոխումները չպետք է երբեք ընկալել որպես աշխատողների նկատմամբ պատիժ: Սա պետք է ընկալվի որպես նոր շանս՝ ոստիկանության ոլորտի բարեփոխումները նոր հունով շարունակելու եւ մեր քաղաքացիներին ոստիկանության, փրկարար ծառայության եւ միգրացիայի ու քաղաքացիության ծառայության օրինակով հանրային ավելի արդյունավետ ծառայություն մատուցելու կոնտեքստում»,-ասաց փոխնախարարը:

Պատգամավոր Սարգիս Խանդանյանը հետաքրքրվեց, թե այս երեք ծառայությունների մեկտեղումն ինչ ժամանակացույցով է տեղի ունենալու: Սարգսյանը վստահեցրեց, որ ժամանակացույցը մշակելիս առաջնորդվել են այն կանխավարկածով, որ անգամ 1 րոպե ծառայության մատուցման կանգ չպետք է լինի հանրության համար: «Մենք շատ կարճ ժամանակ՝ շուրջ 4 ամիս, կունենանք 13 նախարարություն, այսինքն ՝ դեռեւս շուրջ 4 ամիս Արտակարգ իրավիճակների նախարարությունը կշարունակի գործել, մինչեւ ՆԳՆ-ում համապատասխան կադրային նշանակումները կիրականացվեն, եւ նախարարությունն ի զորու կլինի իրականացնել այդ ֆունկցիաները: Հենց ավարտվի այդ ժամանակահատվածը, ավտոմատ այդ ֆունկցիոնալ բազան կտեղափոխվի ՆԳՆ, ու նախարարությունը կիրականացնի այդ ֆունկցիաները»,-եզրափակեց փոխնախարարը:

ԼՈՒՐԵՐ

ՏԱՐԻ ԵՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը որոշել է տարեվերջյան հավաքն անցկացնել Ջերմուկում: Այդ նպատակով վարչության անդամները՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, դեկտեմբերի 17-ին գնալու են Ջերմուկ եւ այնտեղ հավաքներ անցկացնեն:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ հանդիպումների ժամանակ ամփոփվելու է 2022 թվականը, բացթողումներն ու ձեռքբերումները, եւ անդրադարձ է կատարվելու նաեւ հաջորդ տարվա անելիքներին: Մենք տեղեկացանք, որ ՔՊ-ականների կողմից Ջերմուկ մեկնելը կոնկրետ նպատակ է հետապնդում, եւ որոշում են կայացրել այդ քաղաքն ընտրել որպես հավաքի վայր, քանի որ սեպտեմբերին եւ դրանից հետո ադրբեջանական կողմի գործողություններից ամենից շատ տուժել է հենց այս քաղաքը:

Նշենք, որ, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների, իշխանականների հավաքը կանցկացվի «Հայաթ» հյուրանոցում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿՍՏԵՂԾՎԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական օդանավի հետ տեղի ունեցած ավիացիոն պատահարի քննությունն անհապաղ կազմակերպելու եւ վարելու նպատակով հանձնաժողով կստեղծվի:

Հիշեցնենք, որ վերոնշյալ պատահարը տեղի էր ունեցել Կոտայքի մարզի Ջրաբեր համայնքի տարածքում: Ավիացիոն վթարի հետեւանքով BeechCraft 95-B55 մասնավոր ինքնաթիռն էր կործանվել: Օդանավի 2 օդաչուները՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ Ալեքսեյ Պռոցենկոն եւ Վիտալիյ Ռոգատկինը, զոհվել էին:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ինքնաթիռի վթարի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովը կնախագահի տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը: Արտակարգ իրավիճակների նախագահ Արմեն Փամբուխչյանը հանձնաժողովի փոխնախագահը կլինի: Հանձնաժողովի կազմում կներգրավվեն նաեւ առողջապահության եւ պաշտպանության նախարարների տեղակալները, ինչպես նաեւ ԱԱԾ ու ոստիկանության պետերի տեղակալներն ու այլք:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՀԻՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչներ՝ «Բի էս Թի» ՍՊԸ-ի եւ «Ֆլորես աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից, այդ թվում՝ ««ԱԿՍՈՆ» ապրանքաիումքային բորսա» ՍՊԸ-ի հարթակում իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2022թ.-ի դեկտեմբերի 30-ը, երկարաձգվում են մինչեւ 2023թ.-ի հուլիսի 03-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցեով, ժամը 9:30-17:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ակսոն» ԱՀ բորսայի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) 29.12.2022թ.-ից յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 12:00-ից, իրականացվելու է «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ» հիմնադրամի կողմից ներկայացված՝ հիմնականում օգտագործված, վնասված, հնամաշ գրասենյակային աթոռների, պահարանների, սեղանների, գրատախտակների, գրապահարանների, համակարգչի սեղանների, սեղան-պահարանների, բազմոցների, օդափոխիչների, ֆոտոխցիկների, տպիչ սարքերի, հեռուստացույցերի, համակարգիչների, մոնիտորների, սառնարանների, ջրի ապարատների, շերտավարագույրների եւ այլ գույքերի աճուրդային վաճառքը՝ «դասական» (գնի բարձրացմամբ) եղանակով:

Մանրամասն տեղեկությունների, ինչպես նաեւ բորսայի հարթակում վաճառվող այլ լոտերի ցանկին ծանոթանալու համար կարող եք այցելել www.akson.am (www.borsa.am) կայքի «Վաճառվող լոտեր» բաժին կամ զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով:

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների առարկայական ծրագրերը:

Ըստ այդմ՝ հաստատվել են «Աշխարհագրություն», «Արվեստ», «Բնություն», «Գրականություն», «Ես եւ շրջակա աշխարհը», «Երաժշտություն», «Երկրաչափություն», «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն», «Իմ հայրենիքը», «Կենսաբանություն», «Կերպարվեստ», «Համաշխարհային պատմություն», «Հայ գրականություն», «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն», «Մաթեմատիկա», «Մայրենի», «Նախնական զինվորական պատրաստություն», «Շախմատ», «Տեխնոլոգիա», «Քիմիա», «Օտար լեզուներ», «Ֆիզիկա», «Ֆիզկուլտուրա» առարկաների ծրագրերը:

ԱԺ ՆԻՍՏ

ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

ՀՀ ազգային ժողովը վավերացրեց երկու վարկային համաձայնագիր. բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը:

««Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքների նախագծերն ԱԺ դեկտեմբերի 9-ի արտահերթ նիստում ներկայացրեց ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանը:

Փոխնախարարն ընդգծեց, որ երկու համաձայնագրերն էլ վերաբերում են հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ոլորտներին:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ ստորագրված համաձայնագրին՝նա ասաց. «Ներգրավվելու է 100 մլն դոլարի վարկ: Նշյալ բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են ՀՀ 2022 թ. պետբյուջեի մասին օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը: Եվ վարկային միջոցների՝ ժամանակին ստացումը կարեւոր նշանակություն ունի պետբյուջեի՝ կատեգորիաներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից»,-ասաց նա:

Նրա խոսքով՝ այս համաձայնագիրը կապված է բազմաթիվ բարեփոխումների հետ: Օրինակ՝ հարկաբյուջետային պլանավորման, թափանցիկության, ռիսկերի կառավարման, նաեւ պետական ծախսերի արդյունավետության բարձրացումն է կամ պետական ներդրումների, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության համակարգի բարեփոխումները, կանաչ տնտեսության քաղաքականության մշակումը եւ այլն:

«Բացի այն, որ ներգրավվող բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը, նշյալ ծրագրերի քաղաքականության աղյուսակով սահմանված միջոցառումները նպաստել են կառավարության բարեփոխումների օրակարգի իրականացմանը՝միտված լինելով պետական պարտքի եւ հարկաբյուջետային ռիսկերի կառավարման ամրապնդմանը, պետական արժեթղթերի շուկայի բարելավմանը, կորպորատիվ թափանցիկության ընդլայնմանը»,-ասաց փոխնախարարը:

Այսպիսով, Ասիական զարգացման բանկից ներգրավվելու է 100 մլն դոլար՝ լողացող տոկոսադրույքով: Տոկոսադրույքը կազմում է SOFR + 0.6% մարժա: Վարկի տրամադրման ժամկետը կազմում է 12 տարի, արտոնյալ ժամկետը՝3 տարի:

Իսկ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից ներգրավվող վարկը կազմում է 100 մլն եվրո: Կառավարությունը հնարավորություն ունի ընտրելու՝ վարկը ներգրավել ֆիքսված, թե լողացող տոկոսադրույքով: «Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում տոկոսադրույքը կազմում է 3.87 տոկոս, իսկ լողացող տոկոսադրույքի դեպքում՝ 6-ամսյա EURIBOR (կամ դրա անհնարինության դեպքում համապատասխան կողմնորոշիչ տոկոսադրույք)՝ավելացրած 0.95% մարժա: Վարկի ժամկետը կազմում է 20 տարի, արտոնյալ ժամկետը՝ 5 տարի»,-ասաց Հովհաննիսյանը: Նրա խոսքով՝վարկային միջոցները ներգրավվում են բյուջեով նախատեսված պակասուրդը լրացնելու համար եւ ուղղված են այնպիսի կարեւոր բարեփոխումների, որոնք կնպաստեն կառավարման համակարգի հետագա բարելավմանը, ֆինանսական շուկաների բարելավմանը, ինչն իր հերթին կնպաստի տնտեսական զարգացմանը:

«Հայաստան» խմբակցությունից Արթուր Խաչատրյանը նշեց՝ բազմիցս կառավարությունից լսել են, որ փող շատ կա. հիմա փող չկա՞, դրա համա՞ր են պարտք վերցնում: Փոխնախարարը պատասխանեց, որ աշխարհում երեւի 1-2 պետություն կա, որոնց բյուջեն դեֆիցիտային չէ: Կառավարությունը միշտ ծախսում է ավելի շատ, քան հարկ է հավաքում:

«Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված ««Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» նախագիծը քվեարկությամբ ստացավ 59 կողմ, 26 դեմ ձայներ. պատգամավոր Գեւորգ Պապոյանն իր կողմ քվեարկությունը ներկայացրել էր գրավոր: «Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը քվեարկությամբ ստացավ 63 կողմ, 27 դեմ ձայներ՝գումարած Գեւորգ Պապոյանի գրավոր կողմ քվեարկությունը:

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՎՈՒՄ

Ադրբեջանական կողմի համար Լեռնային Ղարաբաղի հարցը դարձել է «փիղը՝ սենյակում», այսինքն՝ խնդիրը կա, բայց փորձում են ձեւացնել, թե չկա. այս մասին ԱԺ-ում ասաց Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը՝ անդրադառնալով պատգամավոր Սոնա Ղազարյանի հարցին:

Պատգամավորը հետաքրքրեց, թե հայկական կողմը շարունակում է արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հնարավոր պայմանագրի հարցն ու ԼՂ-ում բնակվող հայերի իրավունքների եւ անվտանգության հարցը տարանջատած քննարկել:

Գրիգորյանը պարզաբանեց, թե ինչու է հայկական կողմը եկել այն եզրակացության, որ այդ հարցերը տարանջատված պետք է լինեն: «Երբ մենք Վաշինգտոնում քննարկումներ ենք ունեցել, եւ ավելի հստակություն է եղել միջազգային մեխանիզմի ստեղծման վերաբերյալ, մենք մեր հավանությունն ենք տվել, որ հարցերը տարանջատվեն: Սակայն երբ միջազգային մեխանիզմի վերաբերյալ որեւէ հստակություն չկա, ապա դա հայկական կողմի համար դժվարացնում է խաղաղության պայմանագրի մասով առաջ գնալը»,-ասաց նա:

Նրա խոսքով՝Ադրբեջանի մոտեցումը, թե Ղարաբաղի հարցը լուծված է, որեւէ ձեւով չի օգնում այս հարցով առաջ ընթանալ:

«Ղարաբաղյան հարցը ադրբեջանական կողմի համար դարձել է «փիղը՝ սենյակում», այսինքն՝ խնդիրը կա, բայց փորձում են ձեւացնել, թե այդ խնդիրը չկա: Մենք կշարունակենք աշխատել եւ կտեսնենք, թե ինչքանով է հնարավոր դրանք տարանջատել »,-ասաց Գրիգորյանը՝ հավելելով, որ ադրբեջանական կողմի այդ մոտեցումն է, որ որոշակի խոչընդոտներ է ստեղծում ավելի արագ առաջ շարժվելու ճանապարհին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցում է Ռուսաստանի Դաշնության Կազան քաղաքում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության պահպանության կոնվենցիայի 50-ամյակին նվիրված համաժողովին:

Դեկտեմբերի 4-9-ն անցկացվող միջոցառմանը ներկայացել են պատվիրակություններ ավելի քան 30 երկրներից: Հայկական կողմից համաժողովին մասնակցում են ԿԳՄՍ եւ Շրջակա միջավայրի նախարարությունների, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ու Երեւանի քաղաքապետարանի «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչները:

Հայաստանը նախապատրաստել է երկու զեկուցում Մետաքսի մեծ ճանապարհին միջնադարյան Հայաստանի դերի եւ պատմահնագիտական ժառանգության պահպանության ոլորտում ունեցած փորձի մասին:

Այցի շրջանակում Հայաստանի պատվիրակությունը հանդիպել է նաեւ Կազանի ժողովուրդների բարեկամության տան հայկական կենտրոնի ղեկավարությանը եւ ծանոթացել գործունեությանը:

Թաթարստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգության ոլորտի պատասխանատուների հետ քննարկվել են երկու երկրների հաջող փորձը եւ համագործակցության հեռանկարները:

ԱՌԱՋԱՐԿ

ԱՊՕՐԻՆԻ ԿՐՊԱԿԸ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԵՑ

«Հայաստանի ազգային պատկերասրահ», «Հայաստանի պատմության թանգարան», «Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան», «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ-ների ղեկավարներն օրերս դիմել էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանին՝ միջնորդություն ներկայացնելու Երեւանի քաղաքապետարան Հանրապետության հրապարակի տարածքում թանգարանի կամարների երկու այան մեջտեղում տեղադրված առեւտրային կրպակն ապամոնտաժելու առաջարկով:

Արձագանքելով նախարարի դիմումին՝ դեկտեմբերի 8-ին Երեւանի քաղաքապետարանն ապամոնտաժել է վերոնշյալ առեւտրային կրպակը՝ վերականգնելով հանրապետական նշանակության հուշարձանի եւ ազգային թանգարանների բարենպաստ տեսքը:

ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

Բրազիլիայի հավաքականի նախկին խաղացող, «Ֆլումինենսեի» նախկին ավագ Ֆրեդը հաղթանակ է մաղթել բրազիլացիներին՝ հույս հայտնելով, որ կիսաեզրափակիչում կլինի Բրազիլիա- Արգենտինա դիմակայություն: «Ցանկանում եմ տեսնել Բրազիլիա - Արգենտինա կիսաեզրափակիչ: Ցանկանում եմ տեսնել իրարանցում, խառնաշփոթ, Նեյմարի խաղն ու Մեսիի արցունքները»,- ասել է Ֆրեդը: Քառորդ եզրափակիչում Բրազիլիան կմրցի խորվաթների, Արգենտինան՝ հոլանդացիների հետ: Այս դիմակայությունների հաղթողները կիսաեզրափակիչում կխաղան իրար դեմ:

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ՌԵԿՈՐԴԸ

Աշխարհի եռակի չեմպիոն, լեգենդար բրազիլացի ֆուտբոլիստ Պելեն իր սոցիալական ցանցի գրառումով շնորհակալություն է հայտնել աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեին աջակցության համար: ՊՍԺ-ի 23-ամյա ֆուտբոլիստը թվիթերյան գրառումով հայտնել էր, որ աղոթում է ֆուտբոլի արքայի առողջության համար: «Շնորհակալություն Կիլիան Մբապե: Ես ուրախ եմ, որ դու գերազանցել ես իմ հերթական ռեկորդը աշխարհի առաջնությունում, իմ ընկեր»,- գրել է 82-ամյա Պելեն: Մբապեն աշխարհի առաջնություններում խփել է 9 գոլ եւ դարձել այդ ցուցանիշով ամենաերիտասարդ ֆուտբոլիստը (23 տարեկան եւ 349 օրական) պատմության մեջ: Նա գերազանցել է Պելեի ռեկորդը՝ աշխարհի առաջնություններում 7 գոլ մինչեւ 24 տարեկան դառնալը:

«ՅՈՒՆԻՍԵՖ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ

«Եվրատեսիլ 2021»-ի հաղթող Մալենան դեկտեմբերի 9-ին նշանակվեց «ՅՈՒՆԻՍԵՖ» Հայաստանի դեսպան: Մալենան «ՅՈՒՆԻՍԵՖ»-ին եւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին միացել էր Երեխաների համաշխարհային օրվա կապակցությամբ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի մեկնարկին: «Դեռահասությունը հատուկ ժամանակաշրջան է երեխայի կյանքում եւ, ինչպես ասում են, «ՅՈՒՆԻՍԵՖ»-ում՝ հնարավորությունների կարեւոր պատուհան՝ օգնելու երեխաներին զարգացնել ապագայի համար անհրաժեշտ շատ կարեւոր հմտություններ եւ կարողություններ: Մենք աշխատում ենք մի շարք նախաձեռնությունների վրա՝ երիտասարդներին հզորացնելու, նրանց 21-րդ դարի հմտություններ սովորեցնելու, համայնքային խնդիրներին մասնակցությունը խթանելու եւ նրանց ձայնը լսելի դարձնելու համար՝ կլիմայի փոփոխության, հոգեկան առողջության եւ շատ այլ կարեւոր հարցերի շուրջ: Ես ուրախ եմ ողջունելու Մալենային «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի թիմում՝ որպես մեր նոր դեսպան: Միասին մենք կանենք հնարավորը, որպեսզի երիտասարդների ձայնը լսելի դառնա»,-իր խոսքում նշեց Հայաստանում «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը: 15-ամյա Մալենան «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի ամենաերիտասարդ ազգային դեսպանն է: Երգչուհին նշեց, որ ոգեշնչված է ու պարտավորված այս նշանակման առթիվ:

● *Դեկտեմբերի 11-ին «Դվին» մյուզիք հոլում տեղի կունենա «Լոբոդա» համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝60000-120000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են գործատուի պարտականությունները եւ իրավունքները՝ կապված աշխատողների ներկայացուցիչների հետ:

Կարեն Բաղամյան 31 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործատուն պարտավոր է՝

-հարգել աշխատողների ներկայացուցիչների իրավունքները եւ չխոչընդոտել նրանց գործունեությանը: Աշխատողների ներկայացուցչի գործունեությունը չի կարող դադարեցվել գործատուի ցանկությամբ,

-խորհրդակցել աշխատողների ներկայացուցիչների հետ աշխատողների իրավական վիճակի վրա ազդող որոշումներ ընդունելիս, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ստանալ նրանց համաձայնությունը,

-ապահովել կոլեկտիվ բանակցությունների վարումը սեղմ ժամկետներում,

-սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում՝ ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, քննարկել աշխատողների ներկայացուցիչների առաջարկությունները եւ տալ գրավոր պատասխաններ,

-աշխատողների ներկայացուցիչներին անվճար տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ՝ աշխատանքին վերաբերող հարցերի վերաբերյալ,

-կատարել կոլեկտիվ պայմանագրով սահմանված այլ պարտականություններ,

-ապահովել աշխատողների ներկայացուցչի՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրականացումը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողների ներկայացուցչի կողմից գործատուի իրավունքները, օրենսդրության պահանջները կամ պայմանագրերի նորմերը խախտելու դեպքերում գործատուն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով դիմելու դատարան՝ աշխատողների ներկայացուցչի անօրինական գործունեությունը դադարեցնելու պահանջով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության անվավերությունը բացառող հանգամանքները:

Լիլիթ Գալստյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները: Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաեւ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը: Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչեւ դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջեւ օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գագիկ Խաչիկյանը Մոսկվայում անցկացված օլիմպիական չեմպիոն Միխայիլ Վորոնինի անվան գավաթի խաղարկությունում նվաճել է 1 ոսկե եւ 3 բրոնզե մեդալ:

Հայաստանի միակ ներկայացուցիչը ոսկե մեդալակիր է դարձել «Նժույգ թափեր» վարժությունում: Բրոնզե մեդալները նա նվաճել է զուգափայտում, պտտաձողում եւ բազմամարտում 47 մասնակիցների մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: